

24.09.2021թ.  
ք. Թալին

N 12-Ա

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՈՒՄԲ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ  
ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ  
Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ**

Ուսումնասիրելով սույն թվականի սեպտեմբերի 17-ին թիվ 18 տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրական համայնքի բնակիչ Գարիկ Հովհաննիսյանի դիմումը՝ կից փաստաթղթերով, թիվ 18 տարածքային ընտրական հանձնաժողովը՝

**Պ Ա Ր Զ Ե Ց .**

**1. Դիմումատուի իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը**

Սույն թվականի սեպտեմբերի 17-ին թիվ 18 տարածքային ընտրական հանձնաժողովում ստացվել է ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրական համայնքի բնակիչ Գարիկ Հովհաննիսյանի դիմումը, որում նշված է. «Ես Գարիկ Հովհաննիսյանս (անձը հաստատող փաստաթուղթ AU 0314620, տրված 11.06.2021թ., 029 կողմից, հաշվառված գ. Բյուրական 27փ. տ.9), որպես Բյուրական համայնքի բնակիչների կարծիքը Աշտարակ, Ագարակ, Աղծք, Անտառուտ, Ավան, Արագածոտն, Արուճ, Արտաշավան, Բազմաղբյուր, Բյուրական, Դպրեվանք, Լեռնարոտ, Կարբի, Կոշ, Ղազարավան, Նոր Ամանուս, Նոր Եղեսիա, Ոսկեհատ, Ոսկեվազ, Սաղմոսավան, Սասունիկ, Վերին Սասունիկ, Տեղեր, Ուշի, Ուջան, Փարպի, Օհանավան, Օշական, Օրգով համայնքների միավորման վերաբերյալ ներկայացվող քաղաքացիական նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ՝ ներկայացնում եմ փաստաթղթեր տեղական հանրաքվե նախաձեռնելու նպատակով գրանցվելու համար»: Դիմումին կից ներկայացված է նաև որոշում՝ տեղական հանրաքվե նախաձեռնելու նպատակով նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ նշանակելու մասին, որը ստորագրված է թվով 5 անձանց կողմից, վերջիններիս ստորագրությունները վավերացված են նոտարական կարգով:

**2. Թիվ 18 տարածքային ընտրական հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները**

«Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝

«1. Տեղական հանրաքվե նախաձեռնելու նպատակով տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող առնվազն 5, իսկ Երևան, Գյումրի, Վանաձոր համայնքներում տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող առնվազն 25 անձ կարող է ձևավորել նախաձեռնող խումբ:

2. Նախաձեռնող խումբը գրանցման համար Երևան քաղաքում Կենտրոնական ընտրական հանձնաժողով, իսկ մնացած համայնքներում համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով է ներկայացնում նախաձեռնող խմբի բոլոր անդամների ստորագրած՝ նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ նշանակելու վերաբերյալ որոշումը, որում առկա ստորագրությունները վավերացվում են նոտարական կարգով, իր անդամների անձը հաստատող փաստաթղթի պատճենները, տեղական հանրաքվեի դնելու համար առաջարկվող տեղական ինքնակառավարման մարմնի որոշման նախագիծը՝ էլեկտրոնային և թղթային տարբերակով, և նախաձեռնող խմբի էլեկտրոնային փոստի հասցեն, որը նախաձեռնող խմբի գրանցումից հետո հրապարակվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ նշանակելու վերաբերյալ որոշման ձևը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

2.1 Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված հարցի նախաձեռնության դեպքում նախաձեռնող խումբը գրանցման համար կարող է դիմել սույն օրենքի 7.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով համայնքի ղեկավարի իրազեկելուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Թիվ 18 տարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի դիմումին կից ներկայացվել է նախաձեռնող խմբի բոլոր անդամների ստորագրած՝ նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ նշանակելու վերաբերյալ որոշումը՝ ստորագրված հինգ քաղաքացիների կողմից: Նախաձեռնող խմբի անդամ Արթուր Կարապետյանի կողմից 23.09.2021թ-ին թիվ 18 տարածքային ընտրական հանձնաժողովին է ներկայացվել դիմում, որով վերջինս տեղեկացնում է, որ հրաժարվում է ներկայացված դիմումից և դուրս է գալիս նախաձեռնող խմբի կազմից:

Նման պայմաններում թիվ 18 տարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ առկա չէ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով սահմանված, իրավասություններ, ով կարող է հանդես գալ նախաձեռնող խումբ, քանի որ նախաձեռնող խումբը պետք է կազմված լինի տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող առնվազն 5 քաղաքացիներից: Նախաձեռնող խմբի անդամ Արթուր Կարապետյանի դիմումի հիմքով խմբում մնում են չորս քաղաքացիներ:

«Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«3. Համապատասխան ընտրական հանձնաժողովը երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշում է ընդունում նախաձեռնող խումբը գրանցելու կամ նախաձեռնող խմբի գրանցումը մերժելու մասին, եթե պահպանված չեն սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները, կամ ներկայացված հարցը, սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, չի կարող դրվել տեղական հանրաքվեի: Համապատասխան ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից և մինչև հաջորդ օրվա ավարտը տեղադրվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը և՛ թիվ 18 տարածքային ընտրական հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրական համայնքի բնակիչ Գարիկ Հովհաննիսյանի դիմումը մերժել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ԹԻՎ 18 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ

ՀԱՆՁՆԱԺՋՈՂՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝



Հ. ԱՍԱՏՐՅԱՆ